

ԲԱՆԱՍՏԵՐ

ԱՐՄԱՆԻՑԵՐԸ

Զ Տ Մ Ռ Ի 1904	Տ Ա Ր Ի Կ Ա Խ Ա Ն՝ 15 Փ Բ Ռ. = 6 Ա Բ Լ. = 3 Գ ո ւ լ ա ր :	Մ Ա Յ Ի Ս - Թ Ա Խ . Բ Ի Ւ 5-6
--------------------------	---	--

ԱՆԻԻ ԿՈՐԹԱՆՈՒՄԸ

U.S. USES

(1034—1064 p.)

U.

Անխիղն վաճառք

Գնած էր Անի ըաղաքը . . .

Նորահարսի նման սպիտակ, արծաթագոյն մշու շովէր քողարկուել եւ ընկնելով երազների քաղցր գիրկը սլացել էր վե՛ր, վե՛ր դէպի երկինք ու ամենի աչքեց թաքնուել ։ Ախուրեան գետն էր միայն որ օձի նման գալարուելով քերում էր Անիի ստորաները եւ իւր պղտոր, ուռչացաց ալիքներով զարկելով դուրս ցցուած ժայռի կտորներին, փրփըր-ւում, կատաղում, ինքն իրան շփոթւում էր եւ ապա գլուխն առնելով կորչում հեռո՞ւ . . .

Բայց ժամանակը անցնում էր առաջ, երբ մի քարակ զեփիւռ շշըն-
ջալով չոյնց Անիքն եւ գորովագութ մօր նման վեր բարձրացնելով նրա
քողը իւր անոյշ, մեղմիկ համրոյրը դրոշմեց Անիք հազար ու մի եկեղե-
ցիների գմբեթներին ու ինքը կարծես վախվիշելով փախաւ հեռու գէպի
ազատն Մասիս . . . Այդ ժամանակ սիրուն էր Անին : Լուսնի ցուրտ
ճառագայթները ընկան նրա աշտարակների, բուրջերի, գմբեթների ու
պալատների վրայ ու նրան տուին դիւթական մի սիրուն պատկեր, Դիւ-
թական մի պատկեր էր ներկայացնում Հայոց թագաւորութեան խնամա-
կալ Վեստ Սարդոսի պալատը, որի սառուստի տակ Ախուրեանը շռնչում
էր, փոթորկւում, դարձում որպէս զի գուրա պոկի հրուանդանի այդ

կատը ու հանդարտ եւ ազատ հոսի առաջ : Բայց նրա ճիգը ի դերեւ էր անցնում : Ժայռը, որի վրայ կառուցուած էր այդ պալատը խիստ ամուր եւ անսասան էր : Այդ իսկ ժամանակն էր, որ Վեստ Սարգիս իշխանը վերջացնելով իւր գիշերուայ ընթրիքը, բարձրացրեց պատուհանի թանձր վարագոյրը եւ դուրս նայեց : Նա նայեց իւր ոտքերի առկ տարածուած քաղաքին ու յուզուեց : Ի՞նչը յուզեց նրան յայտնի չէր : Այդ պահուն քաղաքում տիրում էր խոր լուսթիւն . երբեմն երբեմն միայն լուսում էր պահապանների ոտքերի ձայները, որոնք չափաւոր բայց զանդաղ քայլերով շրջում էին պարիսպների ու աշտարակների վրայ ու հեռուն դիտում : Այդ ժամանակ շինականն ու քաղաքացին, իշխանն ու ազնուած կանը իրենց անդորր քնի մէջ էին ընկղմուած եւ ոչինչ բան չէր յուզում նրանց սիրտն ու հոգին . իսկ խաչնարածի հօաերն ու ջոկերը ազանութեամբ պսկում էին կանաչ խոտը եւ երփներանդ ծաղիկները : Գամիկուներն անգամ անուշ քնած էին եւ նրանց քունն էլ չէր վրդովում ո՛չ հարամին եւ ո՛չ վայրինի գաղանը : Գիշերային այդ պահուն ամեն ինչ խաղաղ էր ու անդորր եւ այդ խաղաղութեան իբրեւ . կենդանի վկաներ Անիի 1001 հկեղեցիների գմբեթներն էին, որոնք այնպէս գեղեցիկ փայլում էին լուսնի արծաթաղոյն ճառագայթների տակ . . .

Վեստ Սարգիս իշխանը այնուհետ հրապուրուեցաւ Անիի գիւթիչ, կախարգական տեսարանով, որ նրա աչքերից կայծակներ թռան եւ լայն բանալով աչքերը կանչեց :

— Հրաշալի՞ց իմ Անի . . . ո՞հ . ե՞րբ արդեօք դու ինձ պիտի պատականիս եւ ե՞րբ արդեօք իմ գլուխը պիտի պսակուի արքայական թագով . . . Ա՛խ, ես ոչինչ չեմ ինայի, ո՞չինչ, միայն թէ իշերս կատարուին՝ եւ գոսող Անին իմ հրամանով միայն շարժուի . . . Դա՞հը . . . բայց ո՞վ կարժանացնի ինձ այդ դահին ու թագին : Փագիկը, իսկական ժառանգը կենդանին է իսկ նրա պաշտպան Վահրամ Պահլաւունի իշխանը արթուն : Միթէ՞ թոյլ կը տան ինձ այդ բանը գլուխ բերելու . . .

Վեստ Սարգիսը լսեց ու ընկաւ մտածմունքի մէջ :

Վրդովալից էր նրա մատածմունքը : Վրէժինգրութեան եւ բարկութեան կայծակներ էին գուրս թոչում : Նրա աչքերից իսկ նրա խրոխա դէմքը երբեմն գունատուում էր, երբեմն այլայլում իսկ երբեմն դառն յուսահատում . . . Ո՞ւմ դէմ էր նա բարկանում կամ ում հետ ժպատում — յայտնի չէր . միայն թէ այդ ժամանակ նրա գլխով անցնում էին փոթորիկներ, զարհութելի քան ովկեանի ահեղ ալեկոծութիւնը, որոնք շառաչելով զարկուում էին իրար, փշրուում, յետ նահանջում ու տեղի տալիս անդորր խաղաղութեան :

Յանկարծ Վեստ Սարգիսը ցնցուեց եւ իւր լայն բացած աչքերը յառեց գէպի Անիի մի փողոցը, ուր մի սեւ կէտ էր երեւում : Այդ սեւ կէտը շտագ գէպի իւր պալատն էր ընթանում :

— Այս ի՞նչ բան է , մըմուաց վեստ Սարգիսը , արդէն կէս զիշեր է եւ փողոցում կրկին մարդ է երեւում Այս տեղ անպատճառ մի բան կայ :

Սեւ կէտը հետզհետէ մօտենալով պալատին , կանգ առաւ եւ շփոթուած սկսեց աջ ու ձախ նայել :

Դրան մօս կանգնաւած պահապանը նրա առաջը կարեց ու խրոխտ ձայնով հարցրեց .

— Ո՞վ ես , ի՞նչ ես ուզում :

— Իշխանին ցանկանում եմ տեսնել , պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով :

— Բայց այս մէջ զիշերի՞ն . . .

— Այս' , խիստ կարեւոր գործ ունիմ նրան յայտնելու :

— Սպասիր ուրիմն , ասաց պահապանը եւ երեք անգամ զարկեց դրան կոչնակը :

Վեստ Սարգիսը շատ զարմացել էր այդ անակնկալ հիւրի համար , եւ հրամայելով ընդունել նրան , ինքն իրեն ասաց .

— Տեսնենք , ի՞նչ է ուզում ինձնից այդ անակնկալ այցելուն , ասաց նա ու ներս մտնելով սկսեց անհամբերութեամբ անց ու դարձ անել սենեկում :

Մի քանի բոպէից յետոյ ներս մտաւ գիշերային այցելուն եւ շփոթուած կանգ առաւ գուների մօտ :

Վեստ Սարգիսը սուր , թափանցող հայեացք ձղեց նրա վրայ ու զարմացաւ :

Իւր առաջ կանդնած էր միջին հասակով մի մարդ քահանայական զգեստով : Նրա գէմքը գունատ էր ու այլայլուած . կարծես նա հենց նոր մի ոճիր էր գործել :

— Նստեցէք . Տէր-հայր , ինչպէս երեւում է դուք շատ յոդնած էք , ասաց իշխանը եւ առաջարկեց քահանային նստել :

Քահանան նստեց առաջարկած գահաւորակի վրայ : Նա աշխատում էր հանգիստ երեւալ , բայց սրամի բարախիւնը նրան չէր թոյլ աալիս , նա գեռ լուս էր եւ ոչ մի բառ չէր կարողանում արտասանել :

Վեստ Սարգիսը խոր զննում էր նրան եւ մտածում :

Այցելուի դէմքը ծանօթ էր իրեն . նա տեսել էր այդ քահանային , բայց թէ ո՞ր տեղ — չէր կարողանու մ մտարերել :

— Իշխան , վերջապէս ասաց քահանան , եւ երկիւղով աջ ու ձախ նայեց , ես մի կարեւոր բան պիտի հազորդեմ քեզ , սակայն այդ բանը խոր գալտնիք պիտի մնայ իմ եւ քո մէջ :

Վեստ Սարգսի աշքերը մի տեսակ փայլ ստացան . նրա հոգին գուշակում էր , որ այդ խոկ լոսպէին նա պիտի մի զարհուրելի լուր լսի :

— Կարող ես վստան լինել , տէր հայր , ասաց Վեստ Սարգիսը :

— Բայց մեզ ոչ ոք չի լսի :

— Աչ ոք : Զգուշութեան համար ես կը փակեմ բոլոր դռները եւ կիցնեմ վարագոյրները , ասաց իշխանը եւ վեր կենալով տեղից փառ գոները եւ իջեցրեց թանձր վարագոյրները :

Նրանք մնացին միայնակ ճրացի տղաօ լուսաւորութեան ատկ : Իշխանը նստեց քահանայի կողքին եւ լուս նրան էր նայում , իսկ քահանան զեռ լուս պիտում էր սենեկի թանկագին զարդարանքներին , որ յունական ճաշակով էր զարդարուած :

— Խօսի՛ր , ես պատրաստ եմ քեզ լսելու , ասաց խորհրդաւոր ձայնով իշխանը :

— Իշխա՞ն , երգուիր Անիի 1001 հիեղեցիների վրայ , որ այս բանը կը մնայ մեր մէջ զաղոնիք , պատասխանեց քահանան :

— Երգում եմ :

— Լսիր ու քեննի , ասաց քահանան այնքան ցած ձայնով , որ հազիւ լուսում էր . — Դու ինձ պէտք է որ անուած լինիս եւ ճանաչես : Ես Կիրակոս քահանան եմ , Կաթողիկոսի գրան հիւրենիքալը :

— Ա՛ . . . յիշում եմ : Ես տեսել եմ քեզ :

— Չորս տարի է ես հնուցած էի հայրենիքիցս եւ մի քանի ամիս է ինչ վերագրածել եմ :

— Բայց ո՞ւր էիր գնացել :

— Կոսանդնու պօլիս : Հոսումոց թագաւորի մօտ :

— Հոսումոց թագաւորի՞ . . . բայց ի՞նչ էիր շինուած այնահեզ , հարցրեց Վեստ Սարգիսը զարմացած եւ իւր աշքերը յառեց Կիրակոս քահանայի վրայ :

— Ես գնացել էի բոլորովին մասնաւոր գործով , երբ բազզը ինձ մի այնպիսի բանի հանդիպեցրեց , որը տակն ու վրայ պիտի անի իմ կեանքը եթէ դու չօգնես ինձ :

— Ասա՞ , ես պատրաստ եմ օգնել քեզ : Եթէ կարողանամ :

— Օ՞ . . . միայն քեզ ճանաչեցի այդ դործին յարմար , որովհետեւ քո մասին Յունաստանի մայրաքաղաքում լսաւ լուրեր են պատռում :

— Ի՞նչպէս :

— Նրանք զովում են քեզ եւ իրենց մարդը համարում . իսկ ինձ էլ այդ տեսակ մի մարդ էր պէտք :

— Ի՞նչպէս . վերջապէս ասա՞ եւ համբերութիւնից մի հանիր ինձ :

— Շտապել պէտք չէ : Իշխան , ես քեզ այս բոլէիս մի այնպիսի զաղանիք պիտի յայտնեմ : որից դու կը սարսափիս :

— Զարմանալի մարդ ես , աէքտէր . ասա՞ վերջապէս զաղանիք :

— Լսի՛ր . քեզ յայտնի է որ մեր Յովհաննէս-Ամբաս թագաւորը Պետրոս Կաթողիկոսի ձեռքով Անին իւր շրջակայքով իւր մահուանից յետոյ յանձնում է Յոյներին : Հետեւապէս նրա տուած այդ թղթի զորութեամբ , Անին իւր շրջակայքով պատկանում է Յոյներին . բայց . . .

— Բայց . . . շարունակեց Վեստ Սարգիսը . որ այրութմ էր անհամբերութիւնից :

— Բայց Յոյները այդ չեն պահանջում . որովհետեւ Անին իւր շըրագակայքով . . .

— Ի՞նչ . . .

— Ի՞նձ է պատկանում, ասաց Կիրակոս քահանան եւ չեշտակի նայեց ուղիղ իշխանի աչքերին :

— Ինչպէս իւռւլ ձայնով հարցրեց Վեստ Սարգիսը եւ շանթահարի նման վեր թուաւ տեղից ու իւր աչքերը յառելով քահանայի երեսին ուղում էր կարդալ նրա աչքերի մէջ թէ այդ քահանան հօ չէ խելագարուել :

— Հանդարաս, իշխան, հանդարաս, ես խելագարուած չեմ :

— Պարզիր միտքդ, աէր հայր, ես դեռ քեզ չեմ հասկանում թէ ինչպէս է որ Անին քոնն է :

— Եաւ պարզ : Այն թուղթը, որով յանձնում էր Յովհաննէս թագաւորը Անին եւ իւր շրջակայքը Յոյներին, այն թուղթը . . . ինձ մօս է :

— Ո՞ւր է, ո՞ւր է այդ թուղթը, ցոյց տուր ինձ, համարեա գուաց Վեստ Սարգիսը եւ խելագարի նման վեր թուղելով տեղից նախ շուրջը նայեց . ապա ձեռքը աարաւ գէպի իւր սրի երախսակալը : Նրա գլխում մի չար միտք ծնեց — սպանել Կիրակոս քահանային եւ տիրաննալ այդ թանկագին թղթին . բայց զապեց իրեն, երբ նկատեց, որ քահանայի փարաջայի տակ նոյնպէս մի սուր փայլեց :

— Հանդարաս, իշխան, մեր աղմուկը կարող են լսել եւ զուր կառկածի տակ ձգել :

Վեստ Սարգիսը զինաթափ եղաւ եւ աւելի մեղմ հարցրեց :

— Պատմիր աէր հայր, թէ ի՞նչպէս այդ թուղթիը քո ձեռքն ընկաւ :

— Ես մայրաքաղաքումն էի երբ կոստանդին թագաւորը իւր մահուան ժամանակ կանչեց ինձ իւր մօս եւ տալով ինձ այդ թուղթը ասաց . «Տա՛ր, հայ քահանայ, այս թուղթը տուր քո թագաւորին եւ ասա՛նրան իմ կողմից թէ ինչպէս ամեն մահկանացու՝ ես էլ յաւիտենականութեան չէմքի վրայ եմ կանգնած եւ չեմ կամենում ուրիշի սիփականութիւնը յափշտակել . թող ուրիշն յետ առնէ իւր թագաւորա թիւնը եւ իւր որդոցը տայ » : (1029 թ.) Կոստանդին թագաւորը մեռաւ եւ ես այդ թուղթը ինձ մօս պահեցի մինչեւ այսօր : Այժմ քո խորհրդին եմ զիմում թէ ի՞նչպէս վարուեմ այդ թղթի հետ . որ կարող է մեծ ապահովութիւն տալ ինձ եթէ ես կրկին վաճառեմ Յուր կայսեր վրայ թէ յանձնեմ մեր թագաւորին :

— Վաճառե՛մ . . . Անին վաճառե՛մ . բացականչեց Վեստ Սարգիսը խորին մամառնքով եւ ապա մի վայրկեան լուս մնալուց յիսոյ շարունակեց :

— Իսկ ո՞ւր է թուղթը, այժմ մօ՞տդ է :

— Ա՛յ , նա պահուած է ապահով տեղ :

Տիրեց լոռութիւն : Երկուսն էլ մտածում էին . երկուսն էլ մտքով սլանում էին փառքի և հարստութեան եաեւից և այն փարթամ Սնիք փրկանքով , հայրենիքի վաճառքի գնով . . .

— Այո՞ , ես համաձայն եմ , վերջապէս ասաց Վեստ Սարգիսը , այդ բանը կը նպաստէ նպատակիս համելուն եւ եսու դու ապահով կը լինենք :

— Ուրեմն զու էլ համաձայն ես ինձ հետ , որ Անին վաճառուի մեր համգանութեան եւ փառքի համար , հարցրեց վերստին Կիրակոս քահանան եւ նրա սրտից ծանր բեռն իջաւ , երբ լսեց Վեստ Սարգսի դրական պատասխանը :

Կիրակոս քահանան գտել էր իւր համախոհին : Միայնակ ծանր էր կատարել այդ վատթար վաճառքը :

— Համաձայն եմ , եւ վաղն եւ եթ դու պիտի գնաս Կ. Պոլիս , Յուլիս , Յուլիս նոր կայսեր՝ Միխայէլի մօտ եւ յանձնես այդ թուղթը նրան Նրանք մեծ փրկանք կը տան այդ թղթին եւ դրանով մեր ճանապարհը կը հարթուի : Ես կը տամ այդ մասին հարկաւոր նամակները :

— Ապրիս , իշխան , ես չեմ սխալուել իմ ընտրութեան մէջ , պատասխանեց Կիրակոս քահանան ոգեւորութեամբ :

Այնուհետեւ երկար խօսեցին երկու այդ անարժան մարգիկ՝ հոգեւորականը եւ աշխարհականը եւ բաժանուեցան իրարից այն ժամանակ միայն , երբ Անին ուզում էր նոր զարթնել իր անուշ քնից :

Կիրակոս քահանան աննկատելի կերպիւ դուրս եկաւ Վեստ Սարգսի պալատից եւ կորաւ Անիի փողոցների մէջ . . .

Բ.

Խենքը

Անին զարթնում էր . . .

Բարձրագիր կաթուղիկէները թօթափում էին իրենցից գիշերային մթութեան քողը եւ հպարտութեամբ վեր պարզելով իրենց ճակաարը , սպառում էին ողջունելու առաւօսուայ անդրանիկ ճառագայթներին :

Հազար ու մի եկեղեցիներից արդէն դղրգում էր առաւօտուայ « երրորդի » ձայնը , իսկ Անիի շրջականերից ոչխարների մայիսնը : Կողիքի բառաչիւնը , ձիերի խրինջոցը եւ հովիւների սրնդի ու երգի ձայները , որոնք միախառնուելով եկեղեցիների զանգերի ձայների հետ , մարգկային հոգին լցնում էին մի եեսակ կենդանութեամբ , մի առանձին աշխուժութեամբ , որից յետոյ ամեն մարդ լիաստա շրթունքով աղօթք էր մըմընջում եւ համբուրելով եկեղեցու դռները գնում իւր գործին : Փողոցները կամաց կամաց լցվում էին մարդկանցով , կեանքը սկսում էր եռ գալ . իսկ

եկեղեցիների մէջ սկսում էր քաղցրաճուագ « Ալէլուն » , իշխանն ու զինուորը , ծերն ու երիտասարդը , կինն ու երեխան եկեղեցիներում ծնկաչոք ազօթում էին եւ գոհութիւն մասուցանում Տիրոջը , իսկ յետոյ սկսում էր անեցիների առօրեայ կեանքք . — ծինելոյզներից բարձրանում էր ծուխը մասայղանաս աղջիկները կուժը ուսներին դէպի աղբիւրներն ու Ախուրեանն էին շտապում , դարբինը փշում էր իւր փուքուը եւ երկաթը շիկացնում վաճառականը իւր առեւտուրն էր սկսում , զինուորը իւր զինուորական վարժութիւնը , իսկ մանրիկ երեխաները՝ փոքրիկ աղջիկներն ու տղաները լցում էին իրենց դռների առաջ՝ փողոցներում եւ սկսում իրենց մանկական զուարթ խաղերը . . .

Մի խումբ բոկոտն տղաներ խաղում էին փողոցի մէջ , երբ զրանցից մէկը ուշադրութիւնը դէպի փողոցի ծայրը զարձնելով կանչեց .

— Խենթը , խենթը՝ գալիս է :

Մանուկները մի վայրկինում զադարեցրին իրենց ուրախ զոսիւնդոչիւնը եւ սլացան դէպի փողոցի ծայրը , ուր երեւեցաւ խենթը մի խումբ մանուկներով շրջապատուած :

Խենթը միջին հասակի մի մարդ էր , մազերը զգգուած , երկար մօրուսը անկանոն թափթփուած , շորերը պատառառուն եւ բոկոտն : Նա ձեռքին մի երկար ծուսմուս փայտ ունէր , որի վրայ երբեմն երբեմն յենաւում էր ու կատաղութեամբ լի աշքերը դարձնում շուրջ , ուշադրութեամբ դիտում ամեն անցորդի . կանգ առնում , խօսում ու խօսացնում : Երեխաներից շատերը ծաղր էին անում նրան , քաշում էին նրա պատառառուն հանդերձներից , իսկ մի քանիսը լուս հետեւում էին նրան եւ երկիւ զածութեամբ նայում նրա օտարոտի շարժմունքներին : Իսկ հասակաւոր մարդիկ , մանաւանդ սառը դասին պատկանողները թէ կրն եւ թէ մարդ նրան « սրբի կապած » էին անուանում եւ ամեն յարգանքներ ցոյց էին սալիս նրան : Ո՞վ էր այդ խենթը , ո՞րտեղացի էր կամ ո՞րտեղից որ գալիս նա առաւօտները եւ կամ ո՞ւր էր զնում — ոչ ոքի յայտնի չէր Ամբողջ քաղաքացիք դրան ճանաչում էին խենթ անուան տակ , որը առաւօտները խիստ կանուխ յայտնւում էր Անիի փողոցներում եւ ուշ գիշերին չքանում . . .

Ահա նա ձեռքի փայտը ճօճելով անցնում է առաջ դէպի Վեստ Սարգոի պալատը եւ տեղ տեղ կանգնելով կանչում .

Ինձ մի հարցնէք ով եմ ես

Վա՛յ ինձ , վա՛յ ինձ

Սիրուն ու շէն Անին եմ ես

Վա՛յ ինձ , վա՛յ ինձ . . .

Կանայք ու հարսները գաների արանքներից նայում էին խենթին , գլուխները շարժում եւ գանազան ենթադրութիւններ անում : Նրանք

հաւատում էին, որ սրբերն են խօսեցնում խենթին եւ թէ Անիի գլխին մեծ չարիք կայ գալու :

Շատ տեղ, ուր կանգ էր առնում խենթը եւ իւր « վա՛յ ինձ, վա՛յ ինձ » ասում, կանայք խաչակնքում էին երեսները եւ խենթին հաց, պանիր, ձու եւայլն տուաջարկում. սակայն խենթը նայում էր նրանց, գլուխը շարժում եւ ճօճելով իւր փայտը առաջ գնում :

— Է՛յ . թողէ՛ք ինձ, թողէք, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ . . .

— Աղջի, խաթուն, լսո՞ւմ ես խենթին, նա էլ մի չարիք է գուշակում Անիի գլխին ինչպէս որ անցած գիշեր գուշակում էր մեր գրկից Մարօն, դարձաւ մի կին իւր հարիւանունուն, որ մտքամոլար նայում էր խենթի ետեւից :

— Հա՛, եղաս ջան, ճիշտ է, աշխարհի վերջը եկել է, ժամանակներս փչացել է, էլ ոչ մեծ կայ, ոչ փոքր : Աստուծոյ բարկութիւնը շուտով պիտի իջնի Անիի գլխին, պատասխանեց նա խոր հոգոց հանելով :

— Ի հա՛րէէ որ Աստուծոյ բարկութիւնը պիտի իջնի . Աստուծ Քնչպէս կարող է համբերիլ այն անզգամութիւններին, որ մեր ջանելները գործում են: Մի՞տքդ է անցեալ օրուայ դէպքը Մայր տաճարում թէ ի՛նչ օյին հանեցին խեղճ հայր սուրբի զլուխը : Նրանք հայր սուրբի կարճ հասակի վրայ ծիծաղել ուզելով ահազին զրբակալ էին զրել նրա առաջ, որ խեղճը չ'կարողանայ աւետարան կարգալ ու իրենք վրան ինդան: Հա՛, լաւ խնդացին, նրա անէծքը զուր չի անցնի անեցիների գլխին :

— Թո՞ղ Տէրը փրկէ մեկ, պատասխանեց եղասն եւ ներս գնաց :

Մինչդեռ երկու հարեւանուհիները խօսում էին, այդ միջոցին խենթը « Դարբնոց փողոցից » ծոռելով մտաւ րուն փողոցը եւ իւր փայտը շարժելով կանգ առաւ Արքունիք պալատի մօտ ուր ապրում էր այդ ժամանակ Վեստ Սարդիս իշխանը : Նայից վերեւ, նայից ցած ու կարծիս հիացաւ նրա նուրբ քանդակները ու պատերին հագցրած գեղին ու մեւքարերից կազմած զարդերը տեսնելով . բայց յանկարծ նրա զոյնը նետուեցաւ, աշքերը կատաղութեամբ լցուեցին եւ համարեա խեղտուող ձայնով կանչեց :

Ինձ մի հարցնէք ով եմ ես

վա՛յ ինձ, վա՛յ ինձ,

Սիրուն ու չէն Անին եմ ես . . .

ասաց : Փայտը ամուր գետին խփեց, մի քանի յիմար ոստիւններ արաւ եւ ապա զիմելով վեստ Սարդիս իշխանի ծառաներին՝ գոռաց :

— Ինչ էք կանգնել, խենթին զինի տուէք, զինի . . .

— Արի՛, խենթ, արի՛ զինի տանք քիզ, կանչեցին ծառաները :

— Հօ՛, հօ՛, հօ՛, ասաց խենթը, փայտով յետ քչեց երեխաներին եւ անցնելով սիւնազարդ սրահից մտաւ խօնանոց, ուր ծառաները անուշահամ կերակուրներ էին պատրաստում իշխանի համար : Խենթին զինի

տուին . նա առնելով գտաաթը դատարկեց , մի քանի ծամածոռ թիւններ արաւ ու ծիծաղեցրեց ժառանիրին :

— Խենթ , զինի էլի՛ կուզի՞ս , հարցնում էին նրանք :

— Տուր մի գաւաթ էլ , ասաց նա և նորից դատարկելով սկսեց աւելի խենթութիւններ անել ու զուաբացնել ծառաներին :

Կարճ ժամանակ անցաւ եւ խենթը յանկարծ ձեռքով գլխին խփեց փայտը գէն չպրանց եւ առանց մի խօսք ասելու պառկեց մի անկիւնում : Քիչ յետոյ նրա խոմիոցը լսուեց :

Մառաները ոչինչ ուշադրութիւն չ'արձրին նրա վրայ . նրանք ճանաչում էին խենթին եւ այդ առաջին անգամը չէր , որ խենթը մի երկու գաւաթ զինի խմելուց յետոյ քնում էր խոհանոցում : Նրանք արդէն մոռացած խենթին եւ այժմ սկսեցին իրար հետ կատակներ ու զրոյց անել :

— Կարօ՛ , զիշերս ո՞վ էր , որ մեր իշխանի մօտ եկաւ , հարցրեց մի ծառայ գոնապանին , որ հենց նոր ներս մտաւ իւր բաժին կերակուրը ստանալու :

— Զ'կիաեմ , մի ինչ որ քահանայ էր եւ զիտե՞ս լոյսը բացւում էր որ հեռացաւ : Այս զիշեր մեր իշխանը քուն չունեցաւ :

— Ի՞նչ կար որ : Մի՞թէ կարեւոր գործ էր :

— Զ'զիտեմ : Ախոռապանին արդէն հրամայուած է չորս ընտիր ձիեր պատրաստել այս զիշերուայ համար : Կարծեմ որ այդ քահանային պիտի հոռոմոց երկիրը ուղեկցին :

Խենթը : որ ամենեւին քնած չէր : այլ կիտմամբ քնած էր ձեւանում , մի տեսակ ցնցուեց երբ այդ խօսքերը լսեց , բայց շուտով զոսկեց իրեն , որ ծառաները գլխի չ'ընդնեն ու անուշ քնած ձեւացնելով իւր խռմիոցը շարունակեց :

— Զարմանայի բան , մեր իշխանը հոռոմներին շատ է սիրում : միշտ նրանց հետ է դրագութիւն անում :

— Հա՛ , բայց Աստուած վերջը բարի անի , ասաց գոնապանը եւ զուրա գնաց : Խօռակդութիւնը ընդհատուեցաւ :

Խենթը մի քանի անգամ գարձաւ կրակի վրայ խորովուողի նման այտա յանկարծ վեր թուաւ տեղից , վայրենաբար չորս կողմը նայեց եւ կանչեց :

— Է՛յ , հէ՛յ . . . ջուր տուէք ինձ : սիրաս այրուում է , ջո՛ւր . . .

Նրան ջուր առին . խմեց : փայտը կրկին ձեռքն առաւ եւ դուրս դալով խոհանոցից կրկին կանչեց իւր հին երգը :

Բայց այս անգամ նրա ձայնը գողում էր ու սրունքները ծալւում : Խսկ աշագրութեամբ նայողը կը տեսնէր : որ նրա աչքերից առատապէս թափւում էր արտասուքը եւ զլորուելով նրա գզզուած մօրուսի վրայից ընկնում գետին :

Խենթը լալիս էր . . .

գ.

Փոքորկի միջով

Բնութեան տարերքը կատաղել էր . . .

Սպառնալից ամուսնութեամբ կախուել էին եւ նրա շրջակայքի գլխին ու ամէն ինչ կորցրել խորին . անթափանցելի խաւարի մէջ :

Զարհութեամբ փոթորիկ էր սկսում Անիի գլխին . մրրիկը ամենայն կատաղութեամբ փչում էր եւ բուռն ոյժով յարձակուելով Անիի պարիսպաների վրայ . ուզում էր նրանց խորապել , հիմնայատակ անել . բայց դիմադրութեան հանդիպելով՝ յետ էր նահանջում դէպի արձակ ու ազան դաշտերն ու ձորերը եւ այնտեղ սկսում իւր յուսահայ ոռնոցը . . .

Անիի շրջակայքում քամին ոռնում էր ու լալիս . նա լաց լինելով կորչում էր հեռու եւ անյայտանում լեռների մթին խորշերում : Բնութեան տարերքի այդ արհաւելիքի ժամանակ չորս ձիաւոր մարդ ուից ցըբլուի զինորուած մօտեցան Անիի Կարուց դրանը եւ կանգ առան : Այդ դուռը փակ էր եւ պահապանը չէր երեւում :

— Անիծուած պահապանը չէ երեւում , ո՞վ պէտք է մեզ համար դուռը բանայ , մրմռաց ձիաւորներից մէկը :

— Հա' , խնդիրն էլ դրանումն թէ չէ մեզ պէտք չէր նրա թթուած դէմքը տեսնել , պատասխանեց միւսը :

Նրանք առաջ անցան եւ սկսեցին գուռը ծեծել : Խսկոյն յայտնուեացաւ պահապանը եւ իւր երկայն նիզակի վրայ յենուած կանչեց՝

— Ո՞վ է այնտեղ :

— Բա'ց գուռը , կանչեց ձիաւորներից մէկը եւ յանդուգն կերպիւմին առաջ քչեց :

— Սպասեցէ՛ք , չի կարելի , նշանաբանը ասացէք :

— Կեցցէ՛ Գագիկ , ասաց ձիաւորը :

— Հա' , այդպէս է , անցէք բայց լաւ որ չէք տեսնի այս փոթորկին , ասաց պահապանը եւ գուռը բանալով բաց թողուց ձիաւորներին Անիի պարիսպներից եւ քիչ յետոյ շռնչիւնով նորից փակելով մրմռաց :

— Զարմանալի մարդիկ կան , որ այս տեսակ փոթորկի ժամանակ էլ հանգիստ չեն մնում եւ մասածում են ճանապարհ գնալ ի՞նչ է , մի՞թէ չէին կարող սպասել , որ առաւօտը լուսանար :

Մինչեռ պահապանը փակում էր զուոը եւ ինքն իրեն մրմռում , ձիաւորները շտապով սլանում էին զէպի կարին տանող ճանապարհ :

— Աստուած վկայ լաւ ժամանակ ընտրեցինք : Մեզ ոչ ոք չի նկատի , ասաց ձիաւորներից մէկը :

— Այս : լաւ ժամանակ ընտրեցինք , բայց մրրիկի ձեռքից ազատ-

ուելու չենք . ահսնո՞ւմ ես ինչպէս նա վշում է . կարող է մեղ ձորը ձգել կամ ժայռից ցած գլորել , պատասխանեց միւսը :

— Զէ՛ , քամին ոչինչ չի կարող անել եթէ դեւերը մեղ չը մոլորեցնեն , սրախօսեց միւսը :

Դեւերը այսաեղ գործ չունեն , մրմռաց միւսը եւ վախեցած ձեռքը դէպի ծոցը տարաւ , ուր չօշափեց մի թուղթ՝ Կարծես նա վախենում էր , որ գեւերը չ'յափշտակեն այդ թանկագին թուղթը , որի բոլանդակութեան հետ միայն ինքն էր ծանօթ :

Ջիւորները լոելեայն առաջ էին գնում . մրրիկը հետզհետէ կատազում էր եւ հեռուից արգէն լսելի էին լինում որուման խուլ զգրդիւնը . քիչ յետոյ պիտի սկսուէր հեղեղը : Եւ յիրաւի , գիշերային ճանապարհորդները դեռ մի քանի մզոն չէին հեռացել , երբ առաջին փայլակը դողդողաւով մի վայրկեան միայն լուսաւորեց շրջակայքը եւ հանդչելով կըրին խորին խաւարի մէջ ընկղմեց նրան :

Այդ ժամանակ առաջ գնացող ծիաւորը յանկարծ քաշեց ձիու սանձը եւ կանգնեցրեց երիվարին :

— Ի՞նչ կայ , տէր հայր , ինչո՞ւ ձին կանդնեցրիք , հարցրին միւս ձիւորները շրջապատելով առաջ գնացող ծիաւ որին , որը մեզ ծանօթ կիրակոս քահանան էր :

— Փայլակի լոյսի ատկ մի մարդ անցաւ մեր ճանապարհի մի կողմից միւսը եւ թագնուեց խրամատի մէջ : Վախենում եմ , որ մեզ լրաեսողներ լինին :

— Օ՛ , այդ անկարելի է . իշխանից մենք հրաման ունինք , որ ամեն մի լրաեսի կամ մեզ արգելք եղողի սպանենք , պատասխանեց միւսը :

— Պէտք է սպասել փոքր էլ եւ կրկին փայլակի լոյսով զիսել շըրջակայքը , ապա թէ ոչ ծուզակի մէջ կընկնենք :

Փայլակը նորից փայլեց , տւելի երկար եւ աւելի ահարկու , բայց շուրջը ամայութիւն էր տիքում եւ ոչ մի շարժուն կէտ չէր երեւում : Կիրակոս քահանան լայն բացած աչքերով ուզում էր ամեն մի քար , ամեն մի թուփ խուզարկել , սակայն վայրի հենական լոյսով ոչինչ չէր կարողանում անել :

— Զէ , տէր հայր , ոչինչ չկայ , ինչպէս երեւում է գազան կամ մի ուրիշ կենդանի է եղել , որ շտապով անցել է մեր ճանապարհի վերայ , թէ չէ ո՞վ կը համարձակուի այս ահսակ եղանակին դուրս գալ : Մի՞թէ նրանք մատղիր են գաղաններին կերակուր դասնալու :

— Այս . էլ ոչ ոք չէ երեւում , բայց ես սիսալուած չ'պիտի լինեմ : Կարծեմ մի մարդ էր որ անցաւ , մտախոն ասաց կիրակոս քահանան :

— Դաշտը ընդարձակ է . մենք կարող ենք չեղուել մեր ճանապարհից եւ փոխանակ ուզիղ ճանապարհով գնալու՝ զաշաի միջով գնալ եւ ապա կրկին ճանապարհը ընկնել :

— Զէ : այդ անկարելի է : Գիշերը մութն է եւ մնաք կարող ենք ճանապարհը կորցնել կամ խրամաների հանդիպել :

— Վախեցով մարզը գիշերով տանից չ'պէտք է դուրս գայ : ասաց մէկը եւ ձին առաջ քշեց : Նրան հետեւցին միւսները : Մի քանի քայլ դես չէին արել, երբ յանկարծ, քարերի տակից մի մարդ դուրս թռու եւ կանգնեց ձիւսորների առաջ :

— Անձնատուր եղէք : ապա թէ ոչ ձեզ մտն է սպառնում, գոռաց նա մի այնպիսի խրոխտ ձայնով, որ մեր ճանապարհորդների մարմնով սառը դող անցաւ : Նրանք մի առ ժամանակ քարացածի նման անշարժ մնացին եւ ապա, երբ փայլակի լոյսի տակ նկատեցին, որ իրենց շրջապատողը միայն մի հետիւու մարդ է, ինելքները զլիները ժողովեցին եւ սրերը հանելով յարձակուեցան նրա վրայ :

— Ի՞նչ, գուշ կոռել է՞ք ուղղում, կանչեց նոյն ձայնը եւ իւր ձեռքի ահազին փայտավ խփեց մի ձիւսորի, որը աեղն ու աեղը չունչը փշելով, ցած զլորուեց ձիւս : Միւս ձիւսորները նկատեցին իրենց ընկերոջ մահը եւ աւելի կատաղութեամբ յարձակուեցան . սակայն իրենց թրերով ոչինչ լվաս չկարողացան տալ երկար փայտին, որը աջ ու ձախ հարուածներ էր հասցնում եւ մինը միւսի եաեւից կիսամեռ ցած զլորում : Այդ խառնակութեան ժամանակ ձիւսորներից մէկը չեղելով ճանապարհ կորաւ թմրի եաեւը, երբ դարան մանող մարդը իւր փայտով մի այնպիսի հարուած հասցը լին ձիւսորին, որ նա չ'կարողացաւ անգամ մի ձայն հանել եւ ինչպէս մի փայտ զլորուեցաւ վետին : Դարան մատած մարդք փայտը գետ աջ ու ձախ էր սպատեցնում ու ինքն իրեն ասում :

— Ո՞ւր էք, է՞լ չկաք, էլ չկա՞ք . . .

Տեսնելով որ էլ մարդ չկար, որի հետ կարող լինէր կոռուել, դարան մատած մարզը փայտը մի կողմ նետեց եւ մօտենալով կիսամեռ մարդուն, որի բերանից փրփուր եւ արիւն էր դուրս գալիս, գոռաց՝

— Է՞յ, անիծից արմատ, առա՛, ո՞ր սատանի քամին էր տանում ձեզ եւ ո՞ւր :

Ընկած մարզը մահամերձ խրխրոց էր հանում եւ մի քանի անկապ կցկառուր խօսքեր արասասանում : Կարծես նա իւր լայն բացած աչքերով ուղղում էր աեսնել թէ ո՞վ էր իրեն հետ խօսողը եւ երբ փայլակի լոյսի տակ նկատեց իրեն վրայ կոթնած մարդուն, սոսկալով նա մի ցնցիւն արաւ, ճիգ արաւ զլուխը բարձրացնելու, բայց նորից զլուխը վայր ձգելով կանչեց :

— Խենթը . . .

— Հա՛, խենթը, լաւ ճանաչեցիր : Ասա՛, ո՞ւր էիք գնում թէ չէ մաս մաս կանեմ քեզ :

Բայց վիրաւորը մի քանի անկապ խօսքեր էլ ասաց եւ յանկարծ մորթած հաւի նման մի քանի ցնցիւն անելով մնաց անշարժ, նա արդէն

մեռած էր : Մեր խենթը երբ նրա մահ նկատեց , թողեց նրան եւ մօ-
տեցաւ միւսներին . ճանապարհի վրայ երեք դիակ միայն նկատեց , որոնց
շորերը եւ գրպանները քրքրելուց յետոյ , ուզեց չորրորդ ձիւորին էլ
խուզարկել . բայց նրա դիակը չ'պատւ : Խենթը սոսկաց :

— Ո՞ւր է չորրորդը : Նրանք չորսն էին : Չորս ձի , չորս մարդ :
Վայ ինձ նա փախաւ , նա տարաւ , ասաց նա եւ երկու ձեռքով դիմին
տուեց :

Այդ ժամանակ հենց իւր գլխին ամպը կարծես ճայթեց . լսուեց որոս-
ման ահոելի զղրդինը եւ խոշոր անձրեւը սկսեց թափուել խենթի դըլ-
խին . . .

Խենթը պահ մի կանգ տուաւ , խոր ախ քաշեց եւ իւր փայտն տո-
նելով անցաւ տուաջ եւ կորաւ խորին մթութեան մէջ . . .

Դ.

Կիրակոս Քահանան

Բոսֆորի գեղարու եստական ափերին 1034 թուականին ծաղկում ու-
րարդաւածում էր Բիւզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը : Մի
կողմից Պոնտական (Սեւ ծով) իսկ միւս կողմից Միջերկրական ծովերի
ափերից վաճառականական նաւերը շտապում էին դէպի Յունաց այդ քա-
ղաքը եւ վաճառականու թեան հետ միասին ծաղկեցնում նաև այդ քաղաքի
ճարտարագետութիւնը : Առաւօտեան ժամկ տան էր : Կ. Պոլիսը խիստ
մեծ շարժողութեան մէջ էր , կետնքը եռ էր գալիս եւ ամեն զասակարգի
մարդիկ մրջիւնների նման անց ու գարձ էին անում զանազան փողոցնե-
րում : Եթանակիրները նաւահանգիստներում ցած էին բերում նաւերից
զանազան ապրանքներ կամ զէպի նաւերն էին կրում հակերով բեները :
Փոքրիկ նաւակներով անցնում էին իշխաններն եւ իշխանունինները Բոս-
ֆորի մի ափից միւսը , իսկ զինուորականները զարդարուած զէնք ու զրա-
հով . փայլուն զգեստներով եւ հեծած նժոյգների վրայ արագապէս սկանում
էին Կ. Պոլիսի փողոցներով : Այդ մրջոցին Յունաց Միքայէլ կայսեր պա-
լատն էլ զղրդում էր պալատականներով , իշխաններով եւ զինուորական-
ներով : Թէեւ մի խումբ պահապաններ հոկում էին պալատի մուտքը ,
սակայն ամեն գասակարգի մարդիկ անց ու գարձ էին պալատի շփեղ աս-
տիճաններով ներկայանալու Միքայէլ կայսեր Ընդհանուր դանիճի մէջ
արդէն հաւաքուած էին չատ խնդրասուններ եւ պալատի սենեկապետը մէկ
մէկ հրաւիրում էր նրանց կայսեր առանձնասեննեակը , ար ինքը կայսրը
գահի վրայ բազմած ընդունում էր այցելուին եւ լսում նրանց խնդիրը :

Դահլիճի այցելուների մէջ գանւում էր եւ մի հայ քահանայ . որը
նկել էր ներկայանալու կայսեր մի կարեւոր գործի համար . որ զիս զաղա-

նիք էր ամենի համար եւ այդ էր պատճառը, որ գեռ նրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում:

Իրեւ մի անհան հայ եւ այն էլ քահանայ, նա կարդից դուրս դեռ չառ պիտի սպասէր, մինչեւ որ արժանանար կայսեր տեսութեանը, որով հետեւ ամենից առաջ ընկունվում էին պաշանական եւ զինուորական անձինք, որոնք մեծ յարգունք էին վայելում այդ ժամանակ թէ պալատում եւ թէ քաղաքում:

Միջին հասակի տէր մարդ էր այդ քահանան, ճաղաս եւ խորամանկ աչքերով, որոնք թաղնուած էին նրա դուրս ընկած յօնքերի տակ, Մորուսը ցանցառ եւ չէի, իսկ դէմքի արարայառութիւնը իրովատ եւ յանդուգն: Արգէն մի քանի ժամից աւելի էր ինչ նա սպասում էր, բայց դեռ իրեն չէին հրաւիրել, Երեւում էր, որ անհամբերութեամբ սպասում էր այն բոպէին երբ իրեն ներս կը հրաւիրէին եւ իւր զործը կը վերջացնէր:

Ըստ երեւոյթին այդ « գործը » նրան մեծ անհանգստութեան մէջ էր գցել, նա մինչեւ անգամ, մի քանի անգամ մտածեց դուրս գնալ պալատից, թողնել իւր մատադրութիւնը, բայց կրկին դապում էր իրան, սպասում էր հետեւանքին, սպասում էր վերջացնել իւր գործը, որից կախուած էր իւր ապահովութիւնն ու երջանկութիւնը, Այդպէս էր նա կարծում, այդպէս էր նա համոզուած:

Վերջապէս հերթը նրան հասաւ եւ նրան ներս հրաւիրեցին: Առաջին անգամ նրա սիրաը դոզ ընկաւ, բայց յետոյ ինքն իրեն հաւաքեց եւ ներս մասւ կայսեր առանձնաւունեալը, Երկիրածածութեամբ նա բարձրացրեց աչքերը եւ տեսաւ, որ ինքը Յունաց հղօր կայսեր առաջն է գտնուում: Նա իսկոյն ծունկ չոքեց եւ համբուրեց կայսեր զգեստաների ծայրը:

Կայսրը խրոխա էր եւ գեռ չէր արժանացնում իւր հայեացքն ուղղելու գէպի մի հայ ողորմելի քահանան: Վերջապէս նա խօսեց:

— Ո՞վ ես եւ ի՞նչ ես ցանկանում, ասաց նա:

— Կիրակոս հայ քահանայ կասեն ինձ, ամենահզօր կայսր, ասաց դողդոջուն ձայնով քահանան եւ մեկնեց զէպի կայսրը թղթի մի փաթեթ:

Միքայէլ կայսրը կարդաց թուղթը եւ գունատուեց: Ուրախութեան թէ՛ բարկութեան վրդովմունք էին որ անցան կայսեր դէմքի վրայ — յայտնի չէր, միայն թէ թղթի ընթերցումը խոր տպաւորութիւն զործեց նրա վրայ: Ըստ երեւոյթին նա այդպիսի բան չէր սպասում: Նոր միայն նա իւր զինուորականների հետ խօսում էր Հայաստանի մասին եւ ծրագիրներ էր կազմում Հայաստանը ձեռքը ձգելու եւ յանկարծ, բաղդի բերմունքով, նրա ձեռքին տալիս Հայոց Յովհաննէս-Սմբատ թագաւորի առ իւր հախորդն ուղղած կտակի թուղթը, որով նա Հայաստանը Յոյներին է յանձնում:

— Ո՞վ առւեց քեզ այս թուղթը , հարցրեց կայսրը :

— Ձեր նախորդ Կոստանդին կայսրը , Տէր , նա մահուան անկողնում կանչեց դիս եւ տալով այդ թուղթը հրամայեց յիս տալ Հայոց Յովշ հաննէս-Սմբատ թափուորին , տակայն ես . . .

— Սակայն դու . . .

— Ես պահեցի ինձ մօս , որպէս զի յանձնեմ Ձերդ Մհծութեանը :

Կայսրը լուռ , ապուշ կրթած աչքերով նայում էր դաւաճանին ու կարծես մտքումը ասում « Հայրենիքիդ ստոր եւ ցած գաւաճան » : Ես սոսկումով լսում էր կիրակոս քահանայի խօսքերը և զարմանում , որ այդ ասողը հայ է եւ այն էլ հայ քահանայ :

— Ի՞նչ ես ուզում սորա փոխորէն , հարցրեց կայսրը մի փոքր լուռթիւնից յետոյ :

— Ահա այս նամակի մէջ յիշուած է ամեն ինչ , պատասխանեց կիրակոս քահանան եւ յանձնեց կայսերը մի ուրիշ գրութիւն : Կայսրը կարդաց եւ այդ նամակը ու գոնունակութեան ժպիտը փայլեց նրա գէմքի վրայ : Այդ նամակն էլ հայ իշխան Վհսա Սարգսիցն էր , որ Հայաստանը Յոյներին էր խոստանում տալ , միայն թէ վարձատրէին իրեն : Ես ամեն պատրաստակամութիւն էր յայտնում օգնելու Հայաստանը Յոյների ձեռքը տալու :

— Ասա , խնդրիր ինձանից ինչ որ ցանկանում ես : Ես կը կատարեմ քո խնդրիը , ես տեսնում եմ , որ դու հաւատարիմ ծառայ ես ինձ . ասաց կայսրը ժպիտը երեսին :

— Ես Ձերդ Մհծութեան ասողջութիւնն եմ ցանկանում եւ խընդրում եմ վարձատրել ինձ , որպէս զի ապահով անձկացնեմ կեանքիս վերջին մնացորդը , ասաց կիրակոս քահանան խոր գլուխ իջեցնելով :

Միքայէլ կայսրը ցաւակցաբար գլուխը շարժեց : Նա զգաց որ անպիտան քահանան իւր ապահովութեան համար ծախում է իւր հայրենիքի ազատութիւնը , ուստի գառնալով դէպի իւր պայտատականները ասաց :

— Ամենալաւ պատիւներ տալ այս քահանային եւ մեծ քանակութեամբ ուկով վարձատրել : Սա մեծ ծառայութիւն է անում մեզ : Ապա գառնալով կիրակոս քահանային աւելացրեց :

— Յայտնեցէք իմ համակրանքը Հայոց թագաւորութեան իշխան Վհսա Սարգսին եւ ասացէք , որ նա էլ կը վարձատրուի ինձանից եւ շուշով իմ զօրավարներից մէկին կուզարկիմ Հայաստանը գրաւելու , այն ժամանակ , ես վստահ եմ , որ Հայերը ազատ շունչ կը քաշեն զանազան բաղաւախնդիր իշխանների բռնութիւններից եւ բարբարոսների յարձակմունքից :

Կիրակոս քահանան խոր գլուխ տուեց , կրկին համբուրեց կայսեր զգեստի փեշի ծայրը եւ գոհ սրտով դուրս գնաց :

Ամեն ի՞նչ կատարուել էր . . .

է.

Մերունի հայրենասէրը

1040 թուականին վախճանուելով Յովհաննէս-Սմբատ Հայոց թագաւորը . Հայաստանը երերուն դրութեան մէջ ընկաւ : Վերջին օրհասը մօտ էր եւ Բագրատունեաց շառաւիզը պիտի հանգչէր ընդ միշտ : Այդ էր թուլամորթ թագաւորի կտակը . այդ էր նրա թողած յիշատակը : Նա մեռնելով ժառանգ չ'թողեց : Ո'չ , թողեց . բայց ոչ կենդանի : Խօսուն արարած . որը կարողանար լուանալ իւր խայտառակ թուլամորթութիւնը , այլ մի թուղթ , մի կտակ . որով իւր նախնիքներից սրբազործուած երկիրը իւր մահից յետոյ յանձնում էր Յոյներին : Շատ թանկ ծախեց իրեն . հազարաւորների եւ տասնեակ հազարաւորների արիւնով ու տանջանքով ապահովեցրեց իւր վերջին օրերը եւ ազգի ազատութիւնը կորցնելով գերեզման իջաւ . . .

Մե՛ւ յիշատակ ձիշտ այդ ժամանակն էր եւ դեռ թուլամորթ թագաւորի հոգին պատվում էր Անիի վրայ , երբ հայ իշխաններից մէկը՝ Վահրամ Պահլաւունին ուր սուզի մէջ էր մտել : Նա սուզ էր պահում ո'չ թէ թագաւորի համար , այլ ազգի . Անիի 1001 եկեղեցիների համար : Նա զգում էր , որ նրանք պիտի կործանուին , որ Հայաստանը պիտի կործանուի իսկ իւր ազգը օտարներին ոտնակոփ լինելով պիտի տանջուի : չարչարուի եւ անէծք միայն պիտի կարդայ իւր թագաւորին :

Վահրամ Պահլաւունուն յայտնի էր թագաւորի կտակի զոյութիւնը եւ այդ բանը խիստ յուզում եւ կոկծեցնում էր նրա սիրաք , Երեք օր էր նա դուրս չէր եկել , ոչ ոքի երես չէր ուզում տեսնել , ոչ ոքի չէր ուզում ընդունել , այլ փակուած իւր սենեակում ընկել էր մտածութեանց ծովը եւ մի ելք էր փնտուում Հայաստանը այդ անելանելի զրութիւնից ազատելու . բայց ոչ մի բանի վրայ չէր կարողանում կանգ տռնել : Մըտքերն ահարկու կերպով պաշարում էին նրան եւ աակն ու վրայ անում նրան , կարծես պիտի յամաքէր նրա արիւնը երակների մէջ կամ ցնցէր ուզնեզը : Այդ ժամանակ մի վայրենի մոնչիւն միայն զուրս էր թուչում նրա բերանից եւ յուզում էին նրա սիրաք , ճնշում , տակն ու վրայ անում նրան , կարծես պիտի յամաքէր նրա արիւնը երակների մէջ կամ ցնցէր ուզնեզը : Այդ ժամանակ մի վայրենի մոնչիւն միայն զուրս էր թուչում նրա բերանից եւ նրա աչքերից բոց եւ կրակ ցայտում : Վայ այն թշնամուն , ով այդ ժամանակ նրա առաջ զուրս կը գար . նա պատրաստ էր նրա արիւնը անզամ խմելու : Խոկ երբեմն մըտքերը նրան գուրգուրում էին , փայփայում եւ իրենց թեւերի վրայ տանում նրան ո՞վ զիտէ ո՞ւրի Այդ ժամանակ միայն նրա աչքերի մէջ երեւում էին արտասուքի վճիռ կաթիւներ , որոնք զլորուելով նրա ալեզարդ մօրուքի վրայից : ընկնում էին ցած : Խոնչ արցունքներ էին դրանք ,

ուրախութեան թէ՞ տրամութեան . վշտի թէ՞ բերկրանքի — յայտնի չէր , միայն թէ այդ ժամանակ նրա սրտից դուրս էր թռչում մի այնպիսի հառաջանք : որ խորին կակծի արտայայտութիւն էր նշանակում : Եւ այդ հառաջանքները միայն քիչ շատ ամոքում էին ծերունի հայրենասիրի սիրտը . . .

Հենց այդ տեսակ դրութեան մէջ էր ծերունի վահրամը : երբ իւր սենեկի դուռը բացուելով , չէմֆի վրայ երեւաց նրա աղջիկը , որ տասնութեց գարուն տեսած մի գեղանի օրիորդ էր : Մերունին շփոթուեցաւ : Նա ուզեց իւր արցունքները , իւր վիշտը թագդնել իւր աղջկանից : բայց ուշ էր :

— Հա՛յր , դու լալի՞ս ես . կանչեց օրիորդը եւ փաթաթուեց հօր վզովը :

— Գոհար , սիրելի աղջիկս , ի՞նչու եկաք վրդովելու քո հօր խաղաղութիւնը : պատասխանեց վահրամը եւ համբուրեց աղջկայ ձիւնաւ փայլ ճակատը :

— Ա՛խ , հա՛յր , դու արտասում ես , առանց հարցնելու թէ ինչպէս բարախում է սիրսս եւ ինչպէս չփոթում հոգիս երբ ես քո արցունքներն եմ տեսնում : Միթէ դու քո Գոհարին չե՞ս ճանաչում , որ թագդնում ես ինձնից քո վիշտը , քո արամութիւնը : Ասա ինձ , հայր , ի՞նչ փոթորիկ է սպասում հայրենիքին , ինչ վտանգ է սպասնում Հայուսանին , որ քեզ ստիպում է յալու եւ արտասուելու :

— Զէ՞ , Գոհարիկ , քո զգայուն սիրտը չի զիմանայ այն հարուածին , որը պատրաստում է հայրենիքին : Ես գիտեմ , որ դու հօրդ պէս սիրում ես հայրենիքիդ , ուստի եւ վախենում եմ քեզ յայտնելու այն դոյժը . որը պատասխում է մեր Անիի գլխին :

— Ի՞նչ է հայրիկ , դու ինձ սարսափեցնում ես :

— Այո , աղջիկս , սարսափելի է , խիստ սարսափելի :

— Ի՞նչ , մի՞թէ կրկին ապսամբութիւն կամ մի որ եւ է իշխանի ստորութիւն ես լսել :

— Ո՛չ , ո՛չ , հօրդ երակների մէջ վախկստի արիւն չէ վազում , որ երկիւղ կրի մի որ եւ է իշխանի դաւաճանութիւնից , բայց այժմն դրանից սոսկալի բան է սպասնում մեր գլխին :

— Հա՛ , հասկանում եմ : Կրկին Վեստ Սարդսի խարդախութիւնները կը լինեն քեզ վրդոված :

— Անին ձեռքներից դնում է , աղջիկս , թագաւորը , ո՞հ , այն թուլամորթ թագաւորը իւր կատկով Անին յանձնում է Յոյներին իւր մահից յետոյ : իսկ այժմ մենք թագաւոր չունենք , գլուխ չունենք : Անիի գահը թափուր է եւ այդ գահի համար ո՞վ գիտէ ինչեր է ծրագրում մեր ինամակալը՝ իշխան Վեստ Սարդսի :

— Ի՞նչ պիտի ծրագրի . մի՞թէ դու եւ մեր իշխանները թոյլ կը տաք , որ Վեստ Սարդսի ոտնատակ տայ օրինաւոր ժառանգի իրաւունքը : Զէ՞ որ Գագիկը կինդանի է :

— Այո , կինդանի է , բայց ո՞ւր է պահուած նա : Անմեղ գտոք

ի՞նչ պիտի անի գայլի ճանկերում ։ Վեստ Սարգսի երեսից փախել են պատանի Գագիկը եւ միը հայրենասէր իշխանները, իսկ մի քանի իշխաններ Վեստ Սարգսի ձեռքի կոյր զործիքն են դարձել։ Հայաստանը գտնում է ներկայում այդ խաբերայ իշխանի ձեռքին, որը թեւ առած Յոյներից կարծես ձգաում է զահն էլ ձեռք բերել թէկուզ քանգուի էլ Հայաստանը։ Ահա թէ ի՞նչն է սարսափեցնում ինձ . . .

— Հայր, մի՞թէ քնած են բոլոր իշխաններն էլ, մի՞թէ չի գտընուում նրանց մէջ պարտածնաչը, հայրենիքի վշտին ամոքողը, որ թոյլ են առաջի Վեստ Սարգսին իւրն անելու . . .

— Զէ, դեռ ամեն բան վերջացած չէ։ Դեռ մեռած չէ Վահրամը, որ թոյլ առաջ Վեստ Սարգսին դահը յափշտակելու, սակայն ես վախենում եմ, որ Վեստ Սարգսիը Յոյների օգնութեամբ մեծ վնաս պատճառի Հայրին։ Զէ՞ որ ըստ Յովհաննէս-Միքայ թագաւորի կտակի Անին այժմ Յոյներին է պատկանում։ Մի՞թէ նրանք այս համեղ պատառը ձեռքներից բաց կը թողնեն, առանց առիթից օդառւելու,

— Անիծուեն դաւաճանները, անիծուի Վեստ Սարգսիը, որ Հայաստանը արեան ասպարէզ պիտի շինի, կանչեց Գոհարը եւ նրա աչքերում արցունքներ երեւացին։

— Մի վրդովուեր, Գոհարիկ, ես գիտեմ, որ զու սիրում ես հայրենիքը, որ զու կեանքդ էլ չես խնայի սիրուն Անիի համար, ուր մնաց որ զու մտածէիր քո Հարսպիկի համար։ Զէ՞ որ, եթէ քո նշանած Հարսպիկը ընկնի պատերազմի մէջ, այդ քո անուան համար փառք է։

— Ոչ թէ նա, այլ ես եւս եթէ ընկնեմ Անիի վետապիկների տակ մեծ երանութիւն է ինձ համար։ Ես սիրում եմ այն աղամարդին, որը իւր հայրենիքի համար իւր կուրծքը դէմ կը տայ պաշտպանելու եւ ոչ թէ անարդ զինուորի նման փախուստ կը տայ կոսուի գաշտից։ Հարսպիկին ես ճանաչում եմ։ Նա վախկուաներից չէ եւ վայ նրան, ով նրա սրի բերանը կընկնի։

— Այո՛, Գոհարիկ, այո՛, իմ յոյնն էլ Հարէլի որդոց վրայ է և ես գիտեմ, որ նրանք, բոլորն էլ, չորս եղբայրն էլ, որոնց թւում եւ քո Հարսպիկը, քաջ եւ հայրենասէր աղաներ են և նրանք փախուստ չեն առ կոռւի գաշտից, եթէ իրենց կեանքն էլ յնկեռու լինեն։ իսկ Հարսպիկը՝ այդ պինիւ, հայրենասէր աղան արժանի փեսայացու է քեզ։

— Այո՛, նրանք արժանի են քո զովասանքին, հայրիկ, եւ կը տեսնես, որ քո աղջիկն էլ յետ չի մնայ նրանցից, պատասխանեց Գոհարիկը եւ նրա աչքերը փայլեցին մի տեսակ ովեւորութեամբ։

Վահրամը յուզուեց, նա գրկեց աղջկան եւ մի համբոյր զրոշմեց նրա ճակատին։ առաջայն Վահրամ իշխանի սիրած հանգիստ չէր։ Նա ըզգում էր, որ մի ինչ որ չարազուշակ բան պատառում է Անիի գլխին . . .
(Տարուեակելի)

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶՅԱՆԻՑ